ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴԴԻՄԱԽՈՍԻ ԿԱՐԾԻՔ

Բժշկական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցմանը ներկայացված ԵՊԲՀ հայցորդ Մերի Աշոտի Մխիթարյանի «Աուտիզմի սպեկտրի խանգարման պրենատալ, պերինատալ և գենետիկ որոշ ռիսկի գործոնների գնահատակաը» թեմայով, ԺԴ.00.17 "Հանրային առողջություն և առողջապահության կազմակերպում" մասնագիտությամբ ատենախոսության վերաբերյալ:

Ատենախոսական աշխատանքի արդիականություն.

Սույն ատենախոսությունը նվիրված է աուտիզմի սպեկտրի խանգարման (ԱՍԽ) պրենատալ, պերինատալ և գենետիկ ռիսկի գործոնների համակողմանի և խորացված վերլուծությանը՝ նպատակ ունենալով առավել հստակ պատկերացում կազմել ԱՍԽ-ի առաջացման մեջ ներգրավված գենետիկական և միջավայրային գործոնների վերաբերյալ:

ԱՍԽ-ն այսօր լայնորեն ճանաչվում է որպես նյարդային զարգացման ամենատարածված խանգարումներից մեկը, որի դեպքերի քանակի զգալի աճը վերջին տասնամյակներում ստեղծել է առողջապահական համակարգերի և հասարակության համար լուրջ մարտահրավերներ: Այս միտումը աուտիզմի սպեկտրի խանգարումը դարձել է հանրային առողջապահության առաջնահերթություններից մեկը՝ ընդգծելով դրա կարևորությունը նաև կրթական և սոցիալ-քաղաքական քաղաքականությունների մշակման մեջ:

ԱՍԽ-ի ռիսկի գործոնների գիտականորեն հիմնավորված, մանրակրկիտ ուսումնասիրման արդյունքում հնարավոր է զարգացնել կանխարգելման մեխանիզմները, բարելավել վաղ ախտորոշման միջոցները և կիրառել ավելի նպատակային և արդյունավետ միջամտական ռազմավարություններ: Ներկայացվող աշխատանքը կարևոր նշանակություն ունի հանրային առողջության ու առողջապահության համակարգի զարգացման մեջ՝ բացահայտելով այն գործոնները, որոնք հնարավորություն են տալիս խանգարումը հայտնաբերել հնարավորինս վաղ փուլերում և մշակել նպատակային աջակցության ծրագրեր:

Սույն թեկնածուական ատենախոսությունն ինքնուրույն գիտական հետազոտություն է, որը համապատասխանում է ժամանակակից գիտական չափանիշներին և ունի ակնհայտ

կիրառական արժեք՝ ինչպես հետազոտական, այնպես էլ կլինիկական և հանրային առողջապահական ոլորտներում:

Ատենախոսությունում ձևակերպված գիտական դրույթների, եզրակացությունների և առաջարկությունների հիմնավորումը

Ատենախոսությունում ներկայացված գիտական դրույթները հստակ, ճշգրիտ ու հիմնավոր ձևակերպված են՝ ընդարձակ ու համապարփակ հետազոտական տվյալների վրա հենված և կառուցված համապատասխան գիտական տրամաբանության հիման վրա: Դրանք արտացոլում են թեկնածուի գիտական մտածողության մակարդակը, տեսական հայացքներն ու մեթոդաբանական հիմնավորումները, որոնք փաստում են աշխատանքի բարձր գիտական պրոֆեսիոնալիզմն ու խորը վերլուծական մոտեցումը:

Եզրակացությունները ամբողջովին համահունչ են հետազոտության նպատակներին և առաջադրված խնդիրներին, իսկ ներկայացված գործնական առաջարկությունները կրում են հստակ կիրառական ուղղվածություն՝ ինչը հնարավորություն է տալիս դրանց արդյունավետ ինտեգրում համապատասխան պրակտիկ ոլորտներում, մասնավորապես հանրային առողջության և առողջապահության համակարգում:

Թեկնածուի կողմից ընտրված և կիրառված հետազոտական մեթոդները լիովին համահունչ են թեմայի բնույթին: Դրանք բնութագրվում են արդիականությամբ, մեթոդաբանական հիմնավորվածության և տեղեկատվական հարստության բարձր մակարդակով, ապահովելով անհրաժեշտ չափի և որակի տվյալներ՝ գիտական վերլուծությունների լիարժեք իրականացման համար: Նշված մեթոդների կիրառման շնորհիվ հեղինակին հաջողվել է համակողմանի լուծել առաջադրված գիտական խնդիրները:

Վերոնշյալ դիտարկումների և գնահատականների հիման վրա կարելի է հանգել հետևյալ եզրակացությանը՝ իրականացված հետազոտությունը կատարվել է ամբողջական, համակարգված և մեթոդական տեսանկյունից հիմնավոր ձևով՝ կիրառելով բավականաչափ քանակությամբ և բարձր որակավորված հետազոտական նյութեր: Վերլուծության ծավալն ու խորությունը բարձրացրել են ատենախոսության գիտական դրույթների, եզրակացությունների և գործնական առաջարկությունների հուսալիությունն ու

վավերականությունը, ապահովելով դրանց գիտական հիմնվածությունը և կիրառելիությունը:

Ատենախոսության կառուցվածքի համապատասխանությունը Բարձրագույն Կրթության և Գիտության Կոմիտեի պահանջներին

Ատենախոսությունը ներկայացված է հայերեն լեզվով և ընդգրկում է 131 էջ: Այն բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից՝ ներածություն, գրականության տեսություն, հետազոտության նյութը և մեթոդները, հետազոտության արդյունքները և դրանց քննարկումը, ամփոփում, եզրակացություններ և գործնական առաջարկություններ:

Գրականության ցանկը կազմված է 180 սկզբնաղբյուրներից: Աշխատանքին կցված է նաև հավելված՝ ընդհանուր ծավալով 10 էջ, որն առավել ընդգրկուն դարձնում է ուսումնասիրված տվյալների ներկայացումը:

Հետազոտության արդյունքները ներկայացված են հստակ կառուցվածքով և պատկերային նյութերով՝ օգտագործելով 4 գրաֆիկ, 16 աղյուսակ, որոնք նպաստում են տվյալների վերլուծության հասկանալի և տեսանելի ձևով ներկայացմանը:

Ատենախոսությունում ձևակերպված եզրակացությունները լիովին համապատասխանում են առաջադրված գիտական խնդիրներին և հիմնավորված են իրականացված ուսումնասիրությունների համապարփակ ու անաչառ վերլուծության վրա:

Ներկայացված գիտական աշխատանքը արժանի է բարձր գնահատականի ինչպես մեթոդաբանական հստակության, այնպես էլ բովանդակային խորության և գործնական կիրառելիության տեսանկյունից: Ատենախոսությունն առանձնանում է բազմաշերտ ու համակարգված մոտեցմամբ, որը կարևորագույն նշանակություն ունի հանրային առողջության համատեքստում՝ հատկապես առտիզմի սպեկտրի խանգարումների վաղ ախտորոշման, մայրական և մանկական առողջության բարելավման, սոցիալական աջակցության մեխանիզմների զարգացման, ինչպես նաև կանխարգելման նորարարական ռազմավարությունների մշակման առումներով:

Աշխատությունում ներկայացված գործնական առաջարկությունները կիրառելի են հանրային առողջապահության և առողջապահական կառավարման տարբեր մակարդակներում՝ նպաստելով ինչպես կանխարգելիչ քաղաքականությունների մշակմանը, այնպես էլ առողջապահական ծառայությունների արդյունավետության բարձրացմանը:

Գիտական հետազոտության արդյունքներն ներկայացված են հինգ գիտական հրապարակումներում, որոնցից մեկը՝ տեղական, իսկ չորսը՝ միջազգային հեղինակավոր պարբերականներում, ընդգրկված Web of Science գիտաչափական շտեմարանում: Ավելին՝ այդ միջազգային հրապարակումները տպագրված են ազդեցության գործակից ունեցող Q1 և Q2 դասակարգման ամսագրերում, ինչը վկայում է թե՛ աշխատանքի գիտական արժեքի և նորության, թե՛ դրա միջազգային ճանաչման և հեղինակության մասին:

Սեղմագիրը լիովին համահունչ է ատենախոսության բովանդակությանը՝ հստակորեն արտացոլելով թեմայի հիմնական գիտական արդյունքները, պաշտպանությանը ներկայացվող հիմնադրույթները և գործնական առաջարկությունները: Այն կազմված է ՀՀ Բարձրագույն որակավորման կոմիտեի կողմից սահմանված ձևաչափային և բովանդակային պահանջներին համապատասխան:

Ներկայացված ատենախոսության վերաբերյալ սկզբունքային, մեթոդաբանական կամ բովանդակային լուրջ դիտողություններ չկան: Ստորև ներկայացվող դիտարկումները և հարցերը վերաբերում են միայն մասնակի հստակեցումների անհրաժեշտությանը, որոնք որևէ կերպ չեն նվազեցնում աշխատանքի գիտական արժեքն ու գիտագործնական նշանակությունը և չեն խաթարում դրա ընդհանուր որակական մակարդակը.

1. Հեղինակը նշում է, որ ամուսնալուծված, միայնակ, չամուսանացած ընտանիքներում ավելի հաճախ են հադիպում ԱՍԽ դեպքեր: Մինչ դեռ պարզ չի խոսքը գնում է ընտանեկան կարգավիճակի մասին հետազոտության պահին (երբ) ԱՍԽ-ն արդեն ախտորոշված է, թե՞ հղիության/ծննդաբերության ժամանակ: Հիշենք, որ խոսքը գնում է պրե-պերինատալ ռիսկերի մասին:
2. Կցանկանայինք լսել պարզաբանում, ինչ է նշանակում «երեխաների հաջորդականությունը» (աղյուսակ 1, էջ 47) և ինչու այն զգալի տարբերվում է դեպքերի և հսկիչների խմբերում:
3. Հանդիպում են վրիպակներ, բացթողած բառեր, արտահայտություններ (օրինակ էջ 48, տող 1): Կան անհաջող արտահայտություններ՝ «ծննդյան հաջորդականությունը կարող է ազդել ԱՍԽ-ով ախտորոշվելու հավանականության վրա» (էջ 88):

4. Որոշ աղյուսակներ (աղ.7) չափազանց ծավալուն են՝ գրեթե 6 էջ: Կարելի էր ներկայացնել միայն էական փոփոխությունները, իսկ մնացածը տեղափոխել հավելվածներ:

Եզրակացություն.

Այսպիսով, ԺԴ.00.17 «Հանրային առողջություն և առողջապահության կազմակերպում» մասնագիտությամբ բժշկական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման նպատակով ներկայացված Մերի Աշոտի Մխիթարյանի «Աուտիզմի սպեկտրի խանգարման պրենատալ, պերինատալ և գենետիկ որոշ ռիսկի գործոնների գնահատականը» թեմայով ատենախոսությունը հանդիսանում է բարձր գիտագործնական արժեք ունեցող, մեթոդաբանական տեսանկյունից հիմնավորված և գիտական նորույթ պարունակող ամբողջական գիտական ուսումնասիրություն:

Ատենախոսությունը լիովին համապատասխանում է ՀՀ ԲԿԳԿ-ի կողմից սահմանված պահանջներին, այդ թվում՝ 7-րդ կետի չափանիշներին՝ ներկայացնելով գիտական տեսանկյունից ինքնուրույն և արդիական հետազոտություն՝ կիրառելիություն ունեցող արդյունքներով:

Հաշվի առնելով վերոնշյալը՝ աշխատանքը կարող է ներկայացվել գիտական խորհրդի պաշտպանությանը, իսկ հեղինակը՝ Մերի Աշոտի Մխիթարյանը, արժանի է բժշկական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի շնորհման:

Պաշտոնական ընդդիմախոս՝
ԵՊԲՀ Հանրային առողջության ամբիոնի պրոֆեսոր,
բժշկական գիտությունների դոկտոր,
Ա.Է. Թադևոսյան

06.10.2025թ.
Պաշտոնական ընդդիմախոս պրոֆ. Արտաշես Էդուարդի Թադևոսյանի ստորագրությունը հաստատում եմ:

ԵՊԲՀ գիտական քարտուղար,
բժշկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Տ.Գ.Ավագյան